Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների վերաբերյալ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչությունը վերլուծել է հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 9-ի N1Ն որոշման համաձայն՝ «Տելեկոմ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» և «Յուքոմ» ՓԲԸ-ների կողմից իրենց ինտերնետային կայքերում մինչև 2021 թվականի մարտի 1-ը հրապարակված՝ 2021 թվականի առնվազն հունվարի 1-ի դրությամբ շարժական կապի ծածկույթների վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1002 բնակավայր (ներառված չէ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ում բնակչություն առկա չէ, սակայն դրանք բոլորն ապահովված են հանրային շարժական կապի ծածկույթով:

Հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ այն բնակավայրերը, որտեղ առկա է բնակչություն, ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի 2G, 3G տեխնոլոգիաների ծածկույթով: ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի ցանցի ծածկույթի վերաբերյալ աղյուսակը կցվում է:

Մասնավորապես, ստորև բերված է մանրամասն վերլուծություն ՀՀ բնակավայրերում (ներառյալ՝ բնակչություն չունեցող) 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային շարժական կապի ծածկույթների ապահովվածության վերաբերյալ.

<u>«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթ</u>

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 88.9%-ը՝ 891 բնակավայր: Ընդ որում, նշված 891 բնակավայրերն ամբողջությամբ ապահովված են եղել տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով,

իսկ 612 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 61.1%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 10 բնակավայրով: Միևնույն ժամանակ, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված քաղաքների և գյուղերի ընդհանուր թվաքանակը կազմել է 64, որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (43 բնակավայր) նկատմամբ կազմել է 49%՝ ՀՀ բնակավայրերի ընդհանուր ընդգրկվածության առումով ավելանալով 2,1%-ով (21 բնակավայր): 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված չի եղել ՀՀ բնակավայրերի 11.1%-ը (111 բնակավայր):

<u>«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթ</u>

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 100%-ը՝ 1002 բնակավայր, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 6 բնակավայրով: Ընդ որում, 999 բնակավայրեր (նախորդ տարվա համեմատ ավելացել է 3 բնակավայրով) կամ ՀՀ բնակավայրերի 99.7%-ը ապահովված են տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով, իսկ 988 բնակավայր (նախորդ տարվա համեմատ ավելացել է 4 բնակավայրով) կամ ՀՀ բնակավայրերի 98.6%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով: Հարկ է նշել, որ հանձնաժողովի իրականացրած՝ 800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի մրցույթով «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին տրամադրված թույլտվությամբ սահմանված պարտավորությունների կատարման արդյունքում 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընկերության հանրային շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթով ապահովել է 1002 բնակավայր (այդ թվում՝ նշված տեխնոլոգիայի ծածկույթով չապահովված 121 բնակավայրերը), կամ ՀՀ բնակավայրերի 100%-ը, որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (487 բնակավայր) նկատմամբ կազմել է 106%՝ ՀՀ բնակավայրերի ընդհանուր ընդգրկվածության առումով ավելանալով 51,5%-ով (515 բնակավայր): Այսպիսով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված են ՀՀ բոլոր բնակավայրերը:

<u>«Յուքոմ» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթ:</u>

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 92.3%-ը՝ 925 բնակավայր: Ընդ որում 850 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 84.8%-ը ապահովված են տվյալ օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով, 891 բնակավայր, կամ ՀՀ բնակավայրերի 88.9%-ը՝ 3G տեխնոլոգիայի ծածկույթով: Միևնույն ժամանակ, ընկերության 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով ապահովված է եղել ՀՀ բնակավայրերի 88.2%-ը՝ 884 բնակավայր: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ի հանրային շարժական կապի ծածկույթով ապահովված չի եղել ՀՀ բնակավայրերի 7.7%-ը (77 բնակավայր):

<u>Ամփոփելով</u> վերոնշյալը՝ պետք է արձանագրել, որ ՀՀ բնակավայրերում (ներառյալ՝ բնակչություն չունեցող) 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային շարժական կապի ծածկույթների ապահովվածությունն, ըստ տեխնոլոգիաների և օպերատորների քանակի հետևյալն է.

- ՀՀ բնակավայրերի 4.7%-ը ապահովված է մեկ օպերատորի, 16.9%-ը՝ երկու օպերատորի և 78.3%-ը՝ երեք օպերատորի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթով,
- ՀՀ բնակավայրերի 8.6%-ը ապահովված է մեկ օպերատորի, 32.7%-ը՝ երկու օպերատորի և 58.2%-ը՝ երեք օպերատորի հանրային շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով,
- ՀՀ բնակավայրերի 11.8%-ը ապահովված է մեկ օպերատորի, 81.8%-ը՝ երկու օպերատորի և 6.4%-ը՝ երեք օպերատորի հանրային շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթով: Ընդ որում, նշված 6.4% ցուցանիշը ենթադրում է 64 բնակավայր, որը բնակչության ընդգրկվածության առումով կազմում է 62%:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հանրային շարժական կապի ընդհանուր ծածկույթը նախորդ տարվա (2020 թվականի հունվարի 1-ի) համեմատ հանրապետության ամբողջ տարածքում արձանագրել է աճի դինամիկա 2G, 3G և 4G+/LTE Advanced տեխնոլոգիաներով, մասնավորապես.

- 1 բնակավայրով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 2G տեխնոլոգիայի ծածկույթը,
- 5 բնակավայրով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթը,
- 105 բնակավայրով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել է 100% (1002 բնակավայր), որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (898 բնակավայր) նկատմամբ կազմել է 11,6%: Ընդ որում, 346 բնակավայրով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում երկու օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել է 81.8% (820 բնակավայր), որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի (474 բնակավայր) նկատմամբ կազմել է 73%՝ ՀՀ բնակավայրերի ընդհանուր ընդգրկվածության առումով ավելանալով 34,5%-ով: Միևնույն ժամանակ, 21 բնակավայրով ընդլայնվել է ՀՀ բնակավայրերում երեք օպերատորի փոխադարձ ներթափանցելի հանրային շարժական կապի 4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթը և կազմել է 6.4% (64 բնակավայր), որի աճը 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի նկատմամբ կազմել է 49%:

ԱՂՅՈՒՍԱԿ

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի վերաբերյալ

	Մեկ օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը			Երկու օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը			Երեք օպերատորի ծածկույթով ապահովված բնակավայրերի քանակը			Ծածկույթ չունեցող բնակավայրերի քանակը		
Մարզեր	**2G**	**3G**	**4G+**	**2G**	**3G**	**4G+**	**2G**	**3G**	**4G+**	**2G**	**3G**	**4G+**
Արագածոտնի մարզ	5	16	16	11	57	103	104	47	1	0	0	0
Արարատի մարզ	1	0	1	4	7	87	94	91	11	0	1	0
Արմավիրի մարզ	1	1	0	5	15	87	92	82	11	0	0	0
Գեղարքունիքի մարզ	2	9	15	30	27	75	64	60	7	1	1	0
Լոռու մարզ	10	15	19	25	54	107	95	61	4	0	0	0
Կոտայքի մարզ	1	3	7	9	24	52	59	42	10	0	0	0
Շիրակի մարզ	3	10	10	12	52	117	115	68	3	0	0	0
Սյունիքի մարզ	13	22	31	40	56	101	85	59	6	0	1	0
Վայոց Ձորի մարզ	10	9	15	21	16	38	24	28	2	0	2	0
Տավուշի մարզ	1	1	4	12	20	53	52	44	8	0	0	0
ք. Երևան	0	0	0	0	0	0	1	1	1	0	0	0
Ընդամենը	**47 (4.7%)**	**86 (8.6%)**	**118 (11.8%)**	**169 (16.9%)**	**328 (32.7%)**	**820 (81.8%)**	**785 (78.3%)**	**583 (58.2%)**	**64 (6.4%)**	**1 (0.1%)**	**5 (0.5%)**	**0 (0%)**

* Արծվաշեն բնակավայրը ներառված չէ

* Հաշվարկված է 1002 բնակավայրով